ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 1

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
զետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2016 թվականի հունվարի 25-ից

Երևան ■ 2016 ■ Ереван

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՏԵՐ 4, 67

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին 6, 69

ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ 9, 72

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին 11, 74

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ 14, 77

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին 16, 79

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ 18

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկմա ն նշանների մասին 20

Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին 53

ՑՈՒՑԻՉՆԵՐ 61

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 63

ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ 80

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. (011) 597-537 հայտերի ընդունման բաժին
Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 11) 597-537 отдел приема заявок
Тел. (374 11) 597-535 отдел информационно-технологического обеспечения

Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....4, 67
Сведения о выданных патентах.....6, 69

ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....9, 72
Сведения о выданных патентах.....11, 74

ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ..... 14, 77
Сведения о зарегистрированных промышленных образцзх..... 16, 79

ТОВАРНЫЕ ЗНАКИ.....18
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания 20

Сведения о продлении действия регистрации товарных знаков.....53

УКАЗАТЕЛИ.....61

СООБЩЕНИЯ.....63

ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....80

CONTENTS

INVENTIONS.....4, 67
Information on granted patents.....6, 69

UTILITY MODELS.....9, 72
Information on granted patents.....11, 74

INDUSTRIAL DESIGNS..... 14, 77
Information on registered industrial designs..... 16, 79

TRADE MARKS.....18
Information on registered trade marks and service marks 20

Information on renewal of effect of trademark registration 53

INDEXES.....61

REPORTS.....63

TWO-LETTER CODES.....80

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	*արտոնագրի համարը*
13	*փաստաթղթի տեսակի կոդը*
	A գյուտի արտոնագիր
	B արտոնագրաունակության մասին եզրակացություն
21	*հայտի համարը*
22	*հայտի ներկայացման թվականը*
23	*ցուցահանդեսային առաջնության թվականը*
31	*առաջին հայտի համարը*
32	*առաջին հայտի ներկայացման թվականը*
33	*երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
45	*գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
51	*միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
54	*գյուտի անվանումը*
56	*տեղեկատվության աղբյուրներ*
57	*գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
62	*ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
72	*գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
73	*արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
74	*արտոնագրային հավատարմատար*
85	*միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
86	*միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
87	*միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **2016.01** (11) **2986** (13) **A**
A01D 87/00
(21) **AM20150055** (22) **29.04.2015**
(72) Դանիել Պետրոսի Պետրոսյան (AM), Սամվել Վարդանի Հովհաննիսյան (AM), Վահան Կարենի Կարապետյան (AM)
(73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)
(54) **Բերքի ոչ հատիկային մանրացված զանգվածի հավաքման և բարձման պնևմափոխարկիչ**
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը:

Բերքի ոչ հատիկային մանրացված զանգվածի հավաքման և բարձման պնևմափոխակրիչն ունի մեքենայի շրջանակի վրա տեղակայված կենտրոնախույս օդափոխիչ, ներծծող և մղող օդատարներ: Սարքի ներծծող օդատարը կատարված է ճկուն, որի ծայրամասում տեղակայված է շրջանակի վրա տեղադրված ծայրափողակ: Այն ունի ըստ բարձրության կարգավորվող ուղղորդների միջոցով մեքենայի ընթացքին ուղղահայաց հետադարձ-առաջընթաց շարժում կատարելու հնարավորություն: Ծայրափողակը շարժումն ստանում է էլեկտրաշարժաբերին միակցված շուռտվիկաշարժաթևային մեխանիզմից:

Պարզեցվում է կառուցվածքը, մեծացվում է հուսալիությունը, նկ.1:

---

(51) **2016.01** (11) **2987** (13) **A**
A23L 1/00
A21D 8/00
(21) **AM20140091** (22) **23.07.2014**
(72) Վահրամ Գաբզիմալյան (AM), Վարսենիկ Ավետիսյան (AM)
(73) Վահրամ Գաբզիմալյան, 0005, Երևան, Արցախի 1, բն. 32 (AM), Վարսենիկ Ավետիսյան, 0025, Երևան, Հերացու 14/4 (AM)
(54) **Սննդային հավելումների համալիր**
(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ ֆունկցիոնալ նշանակության սննդային հավելումներին:

Սննդային հավելումների կոմպլեքսը ներառում է 2:1 հարաբերությամբ վերցված խաղողի և դդմի կորիզների փոշի, գետնախնձորի և ծլեցրած գարու ծիլերի լիոֆիլիզացված փոշի, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ, զանգվ. %. կորիզների փոշի՝ 8-20, գետնախնձորի լիոֆիլիզացված փոշի՝ 40-55, ծլեցրած գարու ծիլերի լիոֆիլիզացված փոշի՝ 35-50:

Բարձրացվում են սննդամթերքի ֆունկցիոնալ հատկությունները:

---

(51) **2016.01** (11) **2988** (13) **A**
A61C 8/00
(21) **AM20150116** (22) **16.09.2015**
(72) Յուրի Միքայելի Պողոսյան (AM)
(73) Յուրի Միքայելի Պողոսյան, 0817, Արարատի մարզ, գյուղ Նոր Խարբերդ 10, տուն 14 (AM)
(54) **Ստորին ծնոտի աուտոօստեոպլաստիկայի եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է բժշկության բնագավառին, մասնավորապես՝ ստորին ծնոտի ոսկրային պլաստիկայի եղանակին:

Ստորին ծնոտի աուտոօստեոպլաստիկայի եղանակ, ըստ որի ստորին ծնոտի ախտահարված հատվածի հեռացումից հետո դրա պահպանված հատվածներին սևեռում են անցքերով մետաղական իմպլանտատ, այնուհետև դոնորական հատվածից վերցնում են ոսկրային աուտոտրանսպլանտատ վերնոսկրի հետ միասին, նրան տալիս են ծնոտին համապատասխան օրթոտոպիկ տեսք, տեղադրում են մետաղական իմպլանտատի ներքին մակերևույթի վրա, ապա սևեռում են մետաղական իմպլանտատին, որից հետո մետաղական իմպլանտատը, աուտոտրանսպլանտատը և ծնոտի պահպանված հատվածները ծածկում են շրջակա փափուկ հյուսվածքներով և կարում շերտ առ շերտ հանգուցավոր կարերով:

Բարձրացվում է եղանակի արդյունավետությունը:

---

(51) **2016.01** (11) **2989** (13) **A**
C02F1/00
(21) **AM20150140** (22) **22.10.2015**
(72) Ազնիվ Մխիթարյան (AM), Գևորգ Թոռչյան (AM), Արման Թոռչյան (AM), Միեր Թոռչյան (AM), Ժուժանա Աբրահամյան (AM)
(73) Գևորգ Թոռչյան, 0095, Երևան, Մոլդովական 14, բն. 29 (AM), Արման Թոռչյան, 0095, Երևան, Մոլդովական 14, բն.29 (AM)
(54) **Հոսքաջրերի մաքրման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է հոսքաջրերի մաքրման եղանակին և կարող է կիրառվել սննդի և քիմիական արդյունաբերություններում՝ օրգանական միացություններ, բակտերիաներ, ինչպես նաև ծանր մետաղների աղեր պարունակող հոսքաջրերի վնասազերծման նպատակով:

Հոսքաջրերի pH-ը հասցնում են 9,0-11,0 արժեքի, մշակում մաքրող միջոցով, ապա՝ ֆիլտրում: Որպես մաքրող միջոց օգտագործում են օզոնի և մթնոլորտային օդի խառնուրդ՝ ապահովելով 1լ խառնուրդում օզոնի 30-40մգ քանակություն: Մշակումն իրականացնում են շրջակա միջավայրի ջերմաստիճանում և մթնոլորտային ճնշման ներքո, իսկ ֆիլտրումը՝ ակտիվացրած ածխով:

Բարձրացվում է հոսքաջրերի մաքրման աստիճանը, պարզեցվում եղանակը:

---

(51) **2016.01** (11) **2990** (13) **A**
G01M 15/00
(21) **AM20140081** (22) **27.06.2014**
(72) Վահե Մարատի Ալեքսանյան (AM), Մարինա Սերգեյի Բարսեղյան (AM)
(73) Վահե Մարատի Ալեքսանյան, 2204, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Ռոսիայի 12, բն. 18 (AM), Մարինա Սերգեյի Բարսեղյան, 0074, Երևան, Օստրովսկու 37 (AM)
(54) **Ներքին այրման շարժիչի փորձարկման ստենդ**
(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ ներքին այրման շարժիչների փորձարկման ստենդի կառուցվածքին:

Ստենդն ունի փորձարկվող շարժիչին միացվող ուժաչափական սարք: Ստենդը լրացուցիչ ունի տարողություն, որի մի ծայրամասը խողովակաշարի և կարգավորիչ փականի միջոցով միացած է օդածծիչ-քամիարին, իսկ մյուսը՝ փորձարկվող շարժիչի ներածման կոլեկտորին: Ունի շարժիչի կոլեկտորի բկանցքը կարտերի մթնոլորտային հաղորդակցման բկանցքին միացվող խողովակ: Տարողությունն ունի ներքին օդի չափման և հսկման սարքեր, իսկ տարողության ներքին օդի հաղորդակցումը մթնոլորտի հետ կարգավորվում է մթնոլորտային փականով:

Ընդլայնվում են ստենդի ֆունկցիոնալ հնարավորությունները, 1 նկ.:

---

(51) **2016.01** (11) **2991** (13) **A**
C22C 21/00
(21) **AM20150094** (22) **20.07.2015**
(72) Հենրիկ Բաղդասարյան (AM), Վահե Բաղդասարյան (AM), Սեյրան Կոխլիկյան (AM), Միքայել Նաջարյան (AM)
(73) Հենրիկ Բաղդասարյան, 0060, Երևան, Չարենցի թաղ. 10, բն. 25 (AM), Վահե Բաղդասարյան, 0060, Երևան, Չարենցի թաղ. 10, բն. 25 (AM)
(54) **Բարձր ճշտության անտենայի հայելու նյութի օպտիմալ բաղադրության ընտրության եղանակ**
(57) Ըստ եղանակի մաթեմատիկական պլանավորմամբ որոշում են մետաղ պարունակող համաձուլվածքների շարքից “Al-Zn” համաձուլվածքի բաղադրիչների տոկոսային միջակայքերը: Այդ միջակայքերին համապատասխան պատրաստում են “Al-Zn” համաձուլվածքի նմուշներ: Չափում են նմուշների ռադիոմետրական պարամետրերից կանգուն ալիքի գործակիցը՝ Kկա և ուժեղացման գործակիցը՝ Kու: Ըստ այդ գործակիցների առավելագույն արժեքների ընտրում են անտենայի հայելու նյութի օպտիմալ բաղադրությունը, ընդ որում ընտրված նյութի կանգուն ալիքի գործակիցը պետք է բավարարի $0,85 \le K_{կա} \le 1,0$ պայմանին, իսկ ուժեղացման գործակիցը՝ $0,8 \le K_{ու} \le 1,0$ պայմանին:

Բարձրացվում է անտենայի հայելու նյութի օպտիմալ բաղադրության ընտրության ճշգրտությունը, 2 նկ.:

---

(51) **2016.01** (11) **2992** (13) **A**
H02M3/00
(21) **AM20150139** (22) **20.10.2015**
(72) Նորիկ Պետրոսյան (AM), Գեղամ Կարոյան (AM), Վաչագան Մելքոնյան (AM)
(73) «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Էներգիայի դոզային փոխանցումով քվազիռեզոնանսային կերպափոխիչ**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկային, մասնավորապես՝ կերպափոխիչային տեխնիկային և կարող է կիրառվել էլեկտրասնման համակարգերում:

Էներգիայի դոզային փոխանցումով քվազիռեզոնանսային կերպափոխիչը կատարված է ասիմետրիկ կամրջակային սխեմայով, կամրջակի մի թևում հաջորդաբար միացված են երկու տրանզիստորային բանալիներ և դրանց հանդիպական - զուգահեռ միացված պաշտպանիչ դիոդներ, իսկ մյուս թևում՝ սևեռող դիոդ: Կերպափոխիչը լրացուցիչ ունի պաշտպանիչ ինդուկտիվ ռեակտոր և դոզավորող կոնդենսատոր: Պաշտպանիչ ինդուկտիվ ռեակտորը միացված է առաջին տրանզիստորի էմիտերի և երկրորդ տրանզիստորի կոլեկտորի միջև, իսկ դոզավորող կոնդենսատորը միացված է կամրջակի անկյունագծում՝ սևեռող դիոդի անոդի և երկրորդ տրանզիստորի կոլեկտորի միջև: Սևեռող դիոդի անոդի և երկրորդ տրանզիստորի էմիտերի միջև միացվում է բեռը: Բեռը տրանֆորմատորային կապով է:

Բարձրացվում է քվազիռեզոնանսային կերպափոխիչի հուսալիությունը, 7 նկ.:

ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	*արտոնագրի համարը*
13	*փաստաթղթի տեսակի կոդը* *U օգտակար մոդելի արտոնագիր*
21	*հայտի համարը*
22	*հայտի ներկայացման թվականը*
23	*ցուցահանդեսային առաջնության թվականը*
31	*առաջին հայտի համարը*
32	*առաջին հայտի ներկայացման թվականը*
33	*երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
45	*օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
51	*միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
54	*օգտակար մոդելի անվանումը*
56	*տեղեկատվության աղբյուրներ*
57	*օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
62	*ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
72	*օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը*
73	*արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
74	*արտոնագրային հավատարմատար*
85	*միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը*
86	*միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
87	*միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **2016.01** (11) **435** (13) **U**
A61K 36/00
(21) **AM20150130U** (22) **12.10.2015**
(72) Արմինե Խաչատրյան (AM)
(73) Արմինե Խաչատրյան, 0059, Երևան, Նոր Նորքի 9-րդ զանգված 6, բն. 56 (AM)
(54) **Բերանի խոռոչի և կոկորդի հիվանդությունների բուժման բաղադրանյութ**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է դեղագործության բնագավառին, մասնավորապես՝ բերանի խոռոչի և կոկորդի հիվանդությունների բուժման բաղադրանյութին:

Բաղադրանյութը ներառում է եղեսպակի, անանուխի և էվկալիպտի (նիվենի) տերևների, խնկեղեգի կոճղարմատի, երիցուկ դեղատնայինի ծաղիկների, իսլանդական մամուռի և ակնամոմի ջրասպիրտային թուրմեր, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). եղեսպակի տերևների ջրասպիրտային թուրմ՝ 15,0-25,0, անանուխի տերևների ջրասպիրտային թուրմ՝ 5,0-15,0, էվկալիպտի (նիվենի) տերևների ջրասպիրտային թուրմեր՝ 5,0-15,0, խնկեղեգի կոճղարմատի ջրասպիրտային թուրմ՝ 5,0-15,0, երիցուկ դեղատնայինի ծաղիկների ջրասպիրտային թուրմ՝ 10,0-20,0, իսլանդական մամուռի ջրասպիրտային թուրմ՝ 20,0-30,0, ակնամոմի ջրասպիրտային թուրմ՝ 5,0-15,0:

Ընդլայնվում է բերանի խոռոչի և կոկորդի հիվանդությունների բուժման միջոցների տեսականին:

---

(51) **2016.01** (11) **436** (13) **U**
B25B13/00
(21) **AM20150022U** (22) **27.02.2015**
(72) Վոլոդյա Արամայիսի Ոսկանյան (AM)
(73) Վոլոդյա Արամայիսի Ոսկանյան, 0005, Երևան, Արցախի 8, բն. 10 (AM)
(54) **Մանեկադարձակ**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է ձեռքի գործիքներին, մասնավորապես՝ բազմաչափ մանեկադարձակներին:

Մանեկադարձակը բռնակի ծայրերին ունի տարբեր չափերի մանեկադարձակյա անցքերով աշխատանքային գլխիկներ: Մանեկադարձակի գլխիկները կատարված են գլանի տեսքով, գլխիկների տարբեր չափերի մանեկադարձակյա անցքերը միմյանց հետ լծորդված են շրջանաձև, արտաքին երկու կողմից ունեն շրջանաձև հարթ նիստեր և բռնակի հետ միակցման միջոցներ: Գլխիկի տարբեր չափի մանեկադարձակյա աշխատանքային անցքերից յուրաքանչյուրն արտաքին կողմից ունի հարթ մակերևույթ, ներսից կատարված են կիսագլանաձև նիստեր, որոնք միմյանց են միակցված հարթ մակերևույթների միջոցով: Հարթ մակերևույթների բարձրությունները տարբեր են:

Տարբերակներից մեկում գլխիկի մանեկադարձակյա աշխատանքային անցքերից յուրաքանչյուրը ներսից ունի գոգավոր մակերևույթի կենտրոնում կատարված կիսագլանաձև նիստ: Բռնակի հետ գլխիկի միակցման միջոցն իրականացված է գլխիկի արտաքին շրջանաձև նիստերի կենտրոնում՝ գլանաձև ելուստի տեսքով:

Տարբերակներից մեկում միակցման միջոցն իրականացված է գլխիկի հարթ մակերևույթների կենտրոնում կատարված միջանցիկ անցքում տեղակայված պտուտակի և զսպանակային տափօղակի միջոցով:

Ապահովվում է տարբեր չափերի և տեսակի մանեկների ձգումն ու քանդումը, 123 նկ.:

---

(51) **2016.01** (11) **437** (13) **U**
B64D 9/00
(21) **AM20150121U** (22) **28.09.2015**
(72) Եգոր Համբարյան (AM)
(73) Եգոր Համբարյան, 0052, Երևան, Զ. Սարկավագի 54/4, բն. 27 (AM)
(54) **Ծանր կործանիչ ինքնաթիռի ֆյուզելաժի փոխադրման տարա**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է ավիացիային, մասնավորապես՝ ինքնաթիռի փոխադրման տարաներին, և կարող է

օգտագործվել տարբեր փոխադրամիջոցներով Սու-27 ծանր կործանիչ ինքնաթիռի և դրա մոդիֆիկացիաների փոխադրման համար:

Տարան պատրաստված է պողպատյա պրոֆիլներից և ունի հեծանաֆերմային կառուցվածք, հենակային երկու շրջանակ, հեծաններ և կոշտության կողեր, շրջանակների հորիզոնական կողմերով ու կոշտության կողերով կազմավորված և շրջանակներին միակցված հիմք: Շրջանակներից յուրաքանչյուրն ունի կառանման և ամրակցման օղակներ: Տարան լրացուցիչ ունի վերամբարձ կռունկով բարձրացման, կառանման և քարշակման օղակներով չորս շրջանակ, շրջանակների ուղղաձիգ կողմերով ու կոշտության կողերով կազմավորված պատեր և պատերի միջոցով հիմքին միակցված վերին հիմք՝ կազմավորված շրջանակների հորիզոնական կողմերով, հեծաններով և կոշտության կողերով: Շրջանակներից առաջինը և հինգերորդը հենակային են և ունեն ֆյուզելաժի հենման տարրեր և պրոֆիլային հեծաններ: Երրորդ, չորրորդ ու վեցերորդ շրջանակները օժանդակ են և ունեն ֆյուզելաժի հենման ու սևեռակման պրոֆիլային հեծաններ: Երկրորդ շրջանակը կատարված է տարայի ամրության և կոշտության ապահովման համար: Կոշտության կողերը միակցված են հիմքերին, պատերին և շրջանակներին: Շրջանակների վերին հեծաններն ու վերին կոշտության կողերը, վերին հիմքի կոշտության կողերը հանովի են: Հիմքերից ստորինն ունի հինգ զուգահեռ հեծաններ, որոնց վրա ամրակցված են անիվներ՝ բեռնման աշխատանքները հեշտացնելու համար: Առջևի վեց անիվները շրջուն են:

Ապահովվում է ծանր տրանսպորտային ինքնաթիռներով փոխադրման հնարավորությունների արդյունավետ օգտագործումը, նվազեցվում է մոնտաժման աշխատանքների ծավալը, 12 նկ.:

---

(51) **2016.01** (11) **438** (13) **U**
B64D 9/00
(21) **AM20150122U** (22) **29.09.2015**
(72) Եգոր Համբարյան (AM)
(73) Եգոր Համբարյան, 0052, Երևան, Զ. Սարկավագի 54/4, բն. 27 (AM)

(54) **Գրոհային ինքնաթիռի ֆյուզելաժի փոխադրման տարա**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է ավիացիային, մասնավորապես՝ ինքնաթիռի փոխադրման տարաներին, և կարող է օգտագործվել տարբեր փոխադրամիջոցներով Սու-25 գրոհիչ ինքնաթիռի և դրա մոդիֆիկացիաների փոխադրման համար:

Տարան պատրաստված է պողպատյա պրոֆիլներից և ունի հեծանաֆերմային կառուցվածք, հենակային երեք շրջանակ, հեծաններ և կոշտության կողեր, շրջանակների հորիզոնական կողմերով ու կոշտության կողերով կազմավորված և շրջանակներին միակցված հիմք: Շրջանակներից յուրաքանչյուրն ունի կառանման և ամրակցման օղակներ: Տարան լրացուցիչ ունի վերամբարձ կռունկով բարձրացման, կառանման և քարշակման օղակներով հինգ շրջանակ, շրջանակների ուղղաձիգ կողմերով և կոշտության կողերով կազմավորված պատեր և պատերի միջոցով հիմքին միակցված վերին հիմք՝ կազմավորված շրջանակների հորիզոնական կողմերով, հեծաններով և կոշտության կողերով: Շրջանակներից երրորդը և ութերորդը հենակային են և ունեն ֆյուզելաժի հենման տարրեր և պրոֆիլային հեծաններ: Առաջին, երկրորդ և հինգերորդ շրջանակները օժանդակ են և ունեն ֆյուզելաժի հենման ու սևեռակման պրոֆիլային հեծաններ: Չորրորդ, վեցերորդ և յոթերորդ շրջանակները կատարված են տարայի ամրության և կոշտության ապահովման համար: Կոշտության կողերը միակցված են հիմքերին, պատերին և շրջանակներին: Շրջանակների վերին հեծաններն ու վերին կոշտության կողերը, վերին հիմքի կոշտության կողերը հանովի են: Հիմքերից ստորինն ունի անիվներ՝ բեռնման աշխատանքները հեշտացնելու համար: Առջևի չորս անիվները շրջուն են:

Ապահովվում է ծանր տրանսպորտային ինքնաթիռներով փոխադրման հնարավորությունների արդյունավետ օգտագործումը, նվազեցվում է մոնտաժման աշխատանքների ծավալը, 13 նկ.:

---

(51) **2016.01** (11) **439** (13) **U**
B64D 9/00
(21) **AM20150133U** (22) **14.10.2015**
(72) Եգոր Համբարյան (AM)
(73) Եգոր Համբարյան, 0052, Երևան, Զ. Սարկավագի 54/4, բն. 27 (AM)
(54) **Ռմբակոծիչ ինքնաթիռի ֆյուզելաժի փոխադրման տարա**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է ավիացիային, մասնավորապես՝ ինքնաթիռի փոխադրման տարաներին, և կարող է օգտագործվել տարբեր փոխադրամիջոցներով ռմբակոծիչ ինքնաթիռի և դրա մոդիֆիկացիաների փոխադրման համար:

Տարան պատրաստված է պողպատյա պրոֆիլներից և ունի հեծանաֆերմային կառուցվածք, երկու շրջանակ, կոշտության կողեր, շրջանակների հորիզոնական կողմերով և կոշտության կողերով կազմավորված հիմք: Տարան լրացուցիչ ունի հինգ շրջանակ, շրջանակների ուղղաձիգ կողմերով ու կոշտության կողերով կազմավորված պատեր և պատերի միջոցով հիմքին միակցված վերին հիմք՝ կազմավորված շրջանակների հորիզոնական կողմերով ու կոշտության կողերով: Շրջանակներից առաջինը և վեցերորդը հենակային են և ունեն ֆյուզելաժի հենման տարրեր ու պրոֆիլային հեծաններ: Երրորդ և յոթերորդ շրջանակներն օժանդակ են և ունեն ֆյուզելաժի հենման ու սևեռակման պրոֆիլային հեծաններ: Երկրորդ, չորրորդ և հինգերորդ շրջանակները կատարված են տարայի ամրության և կոշտության համար: Յուրաքանչյուր պատ ունի հանովի ֆերմային մաս, որը տեղադրված է երրորդ և վեցերորդ շրջանակների միջև: Կոշտության կողերը միակցված են հիմքերին, պատերին և շրջանակներին: Շրջանակների վերին հեծաններն ու վերին կոշտության կողերը, վերին հիմքի կոշտության կողերը հանովի են: Յուրաքանչյուր շրջանակ ունի վերամբարձ կռունկով բարձրացման, կառանման և քարշակման օղակներ: Հիմքերից ստորինն ունի անիվներ բեռնման աշխատանքները հեշտացնելու համար: Առջևի չորս անիվները շրջուն են:

Ապահովվում է ծանր տրանսպորտային ինքնաթիռներով փոխադրման հնարավորությունների արդյունավետ օգտագործումը, նվազեցվում է մոնտաժման աշխատանքների ծավալը, 12 նկ.:

---

(51) **2016.01** (11) **440** (13) **U**
B64D 9/00
(21) **AM20150134U** (22) **14.10.2015**
(72) Եգոր Համբարյան (AM)
(73) Եգոր Համբարյան, 0052, Երևան, Զ. Սարկավագի 54/4, բն. 27 (AM)
(54) **Ուսումնամարտական ինքնաթիռի ֆյուզելաժի փոխադրման տարա**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է ավիացիային, մասնավորապես՝ ինքնաթիռի փոխադրման տարաներին, և կարող է օգտագործվել տարբեր փոխադրամիջոցներով Յակ-130 ուսումնամարտական ինքնաթիռի և դրա մոդիֆիկացիաների փոխադրման համար:

Տարան պատրաստված է պողպատյա պրոֆիլներից և ունի ֆերմային կառուցվածք, երկու շրջանակ, կոշտության կողեր, շրջանակների հորիզոնական կողմերով, հեծաններով ու կոշտության կողերով կազմավորված և շրջանակներին միակցված հիմք: Շրջանակներից յուրաքանչյուրն ունի օղակներ: Տարան լրացուցիչ ունի հինգ շրջանակ, շրջանակների ուղղաձիգ կողմերով, հեծաններով ու կոշտության կողերով կազմավորված պատեր և պատերի միջոցով հիմքին միակցված վերին հիմք՝ կազմավորված շրջանակների հորիզոնական կողմերով, հեծաններով ու կոշտության կողերով: Շրջանակներից առաջինը, երկրորդը, հինգերորդը և վեցերորդը հենակային են և ունեն ֆյուզելաժի հենման ու սևեռակման պրոֆիլային հեծաններ: Հինգերորդ և վեցերորդ շրջանակներն ունեն ֆյուզելաժի ամրակցման տարրեր ու հեծաններ: Երրորդ, չորրորդ և յոթերորդ շրջանակները կատարված են տարայի ամրության և կոշտության ապահովման համար: Կոշտության կողերը միակցված են հիմքերին, պատերին և շրջանակներին: Շրջանակների վերին հեծաններն ու վերին կոշտության կողերը, վերին հիմքի կոշտության կողերը, ֆյուզելաժի ամրակցման տարրերը հանովի են: Առաջին, երկրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ շրջանակներն ունեն վերամբարձ կռունկով բարձրացման և կառանման օղակներ:

Ապահովվում է ծանր տրանսպորտային ինքնաթիռներով փոխադրման հնարավորությունների արդյունավետ օգտագործումը, նվազեցվում է մոնտաժման աշխատանքների ծավալը, 12 նկ.:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

Արդյունաբերական նմուշներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի

11	*վկայագրի համարը*
13	*փաստաթղթի տեսակի կոդը* *S արդյունաբերական նմուշի վկայագիր*
21	*հայտի համարը*
22	*հայտի ստացման թվականը*
23	*ցուցահանդեսային առաջնության թվականը*
24	*գրանցման թվականը*
31	*առաջնային հայտի համարը*
32	*առաջնային հայտի ներկայացման թվականը*
33	*երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
51	*արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)*
54	*արդյունաբերական նմուշի անվանումը*
55	*արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)*
72	*հեղինակը(ները), երկրի կոդը*
73	*իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը*
74	*արտոնագրային հավատարմատար*

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

(51) **09-03** (11) **379** (13) **S**
(21) **20150035** (22) **29.10.2015**
(72) Մաթյու Պոստեկ (FR), Նիկոլա Բոնարտ (FR)
(73) «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 2 (AM)
(54) **Հուշանվերային տուփ**
(55)


1.1


1.2


1.3


1.4


1.5


1.6



1.7



1.8

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

Ապրանքային և սպասարկման նշաններին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի

111	*գրանցման հերթական համարը*
151	*գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)*
152	*թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է*
181	*գրանցման գործողության ենթադրյալ ավարտը*
210	*հայտի համարը*
220	*հայտի ներկայացման թվականը*
230	*ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը*
310	*առաջին հայտի համարը*
320	*կոնվենցիայով առաջնության թվականը*
330	*երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
442	*հայտի հրապարակման թվականը*
511	*ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը*
526	*չպահպանվող տարրեր*
540	*ապրանքային նշանը*
551	*կոլեկտիվ կամ հավաստագրային նշան*
554	*ծավալային նշան*
555	*հոլոգրաֆիական նշան*
556	*ձայնային նշան*
591	*գույնը և գունային համակցությունը*
646	*իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը*
730	*նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը*
740	*արտոնագրային հավատարմատար*

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20140539 **(111) 23894**
(220) 09.04.2014 **(151) 11.01.2016**
(181) 09.04.2024

(730) Ռեմտսմա Սիգարետենֆաբրիկեն Գմբհ, DE

(442) 18.06.2014

(310) 991877 (320) 31.01.2014 (330) NZ

(540)



(526) «BLUE» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է կապույտ, սպիտակ և մոխրագույն գունային համակցությամբ:

(511)

դաս 34. մշակված կամ չմշակված ծխախոտ. ծխախոտային արտադրանք. ծխախոտի փոխարինիչներ, բացառությամբ բժշկական կամ բուժական նպատակների համար օգտագործվողների. սիգարետներ. սիգարիլներ. սիգարներ. սիգարետներ պատրաստելու ձեռքի մեքենաներ. ծխախոտի պարկուճներ. ֆիլտրեր (զտիչներ) սիգարետների համար. սիգարետների, ծխագլանակների (պապիրոսների) թուղթ. լուցկիներ և ծխելու պարագաներ:

(740) Արարատ Գալոյան

---

(210) 20140723 **(111) 23895**
(220) 20.05.2014 **(151) 11.01.2016**
(181) 20.05.2024

(730) Ռեմտսմա Սիգարետենֆաբրիկեն Գմբհ, DE

(442) 04.07.2014

(540)



(526) «DUAL CARBON FILTER» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511)

դաս 34. մշակված կամ չմշակված ծխախոտ. ծխախոտային արտադրանք. ծխախոտի փոխարինիչներ՝ բացառությամբ բժշկական կամ բուժական նպատակների համար օգտագործվողների. սիգարետներ. սիգարիլներ. սիգարներ. սիգարետներ պատրաստելու ձեռքի մեքենաներ. ծխախոտի պարկուճներ. ֆիլտրեր (զտիչներ) սիգարետների համար. սիգարետների, ծխագլանակների (պապիրոսների) թուղթ. լուցկիներ և ծխելու պարագաներ:

(740) Արարատ Գալոյան

---

(210) 20141575 **(111) 23896**
(220) 23.10.2014 **(151) 11.01.2016**
(181) 23.10.2024

(730) Սինհյու ԼԼՔ, US
(442) 16.01.2015
(540)

BIRM

(511)

դաս 3. մշակված բույսեր կոսմետիկական նպատակների համար.

դաս 5. դեղամիջոցներ, դեղագործական, անասնաբուժական և քիմիական պատրաստուկներ հիգիենայի համար. դիետիկ նյութեր և սննդային փոխարինիչներ նախատեսված բժշկական (բուժական) նպատակների համար. մանկական սնունդ. դիետիկ նպատակների համար կամ որպես սննդային հավելանյութեր օգտագործվող պատրաստուկներ վիտամինների, միկրոտարրերի և (կամ) միներալների հիմքի վրա. քիմիական պատրաստուկներ բժշկագիտության համար, ախտորոշման պատրաստուկներ և ախտորոշման միջոցներ բժշկական, բուժական նպատակների համար. սպեղանիներ, բժշկական վիրակապման նյութեր, տակդիրներ անմիզապահությամբ տառապողների համար. հիգիենիկ պարագաներ կանանց համար, այդ թվում՝ հիգիենիկ անձեռոցիկներ, տամպոններ, միջադիրներ, հիգիենիկ վարտիքներ. պատրաստուկներ և նյութեր ատամնաբուժական և ատամնատեխնիկական նպատակների համար. վարակազերծիչ միջոցներ, ֆունգիցիդներ, հերբիցիդներ, միջատասպան միջոցներ, պատրաստուկներ մակաբույծների ոչնչացման համար. բուսական էքստրակտներ, բուսական էքստրակտների բաղադրամասեր, կենսաքիմիական պրոցեսով մշակված բուսական էքստրակտներից խառնուրդներ բուժական, բժշկական նպատակների համար. դիետիկ սննդային հավելանյութեր. դիետիկ հավելանյութեր. սննդային հավելանյութեր. բուսական հավելանյութեր, հոմեոպաթիկ հավելանյութեր. սննդային հավելանյութեր, մասնավորապես՝ հակաօքսիդիչներ. դեղաբույսերից էքստրակտներ. սնուցող հավելանյութեր. լոյոնների տեսքով սննդային հավելանյութեր, որոնք վաճառվում են որպես մաշկի խնամքի համար սնուցիչ միջոցների բաղադրամասեր. դեղաբույսեր բուժական, բժշկական նպատակների համար. փոշենման սննդային հավելանյութերով խմելու խառնուրդներ.մշակված բույսեր բժշկական նպատակների համար.

դաս 29. բանջարեղենային էքստրակտներ և պահածոյացված բույսեր խոհանոցի համար. բուսական յուղ և ճարպեր, այդ թվում՝ մարգարին. բուսական էքստրակտներ, բուսական էքստրակտների բաղադրամասեր, կենսաքիմիական պրոցեսով մշակված բուսական էքստրակտներից խառնուրդներ, ցանկացած սննդի մեջ օգտագործելու համար.

դաս 30. բուսական սննդային ըմպելիքներ. բուսական թեյ սննդային նպատակների համար. բանջարեղենային կոնցենտրատներ, որոնք օգտագործվում են որպես համեմունք. հացահատիկի հիմքով սննդային ըմպելիքներ. էքստրակտներ, որոնք օգտագործվում են որպես բուրավետարարներ:

(740) Արարատ Գալոյան

---

(210) 20141576 **(111) 23897**
(220) 23.10.2014 **(151) 11.01.2016**
(181) 23.10.2024

(730) Սինհյու ԼԼՔ, US
(442) 16.01.2015
(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է կապույտ, բաց և մուգ կանաչ, բաց և մուգ դեղին, գազարագույն և կարմիր գունային համակցությամբ:

(511)

դաս 3. մշակված բույսեր կոսմետիկական նպատակների համար.

դաս 5. դեղամիջոցներ, դեղագործական, անասնաբուժական և քիմիական պատրաստուկներ հիգիենայի համար. դիետիկ նյութեր և սննդային փոխարինիչներ նախատեսված բժշկական (բուժական) նպատակների համար. մանկական սնունդ. դիետիկ նպատակների համար կամ որպես սննդային հավելանյութեր օգտագործվող պատրաստուկներ վիտամինների, միկրոտարրերի և (կամ) միներալների հիմքի վրա. քիմիական պատրաստուկներ բժշկագիտության համար, ախտորոշման պատրաստուկներ և ախտորոշման միջոցներ բժշկական, բուժական նպատակների համար. սպեղանիներ, բժշկական վիրակապման նյութեր, տակդիրներ անմիզապահությամբ տառապողների համար. հիգիենիկ պարագաներ կանանց համար, այդ թվում՝ հիգիենիկ անձեռոցիկներ, տամպոններ, միջադիրներ, հիգիենիկ վարտիքներ. պատրաստուկներ և նյութեր ատամնաբուժական և ատամնատեխնիկական նպատակների համար. վարակազերծիչ միջոցներ, ֆունգիցիդներ, հերբիցիդներ, միջատասպան միջոցներ, պատրաստուկներ մակաբույծների ոչնչացման համար. բուսական էքստրակտներ, բուսական էքստրակտների բաղադրամասեր, կենսաքիմիական պրոցեսով մշակված բուսական էքստրակտներից խառնուրդներ բուժական, բժշկական նպատակների համար. դիետիկ սննդային հավելանյութեր. դիետիկ հավելանյութեր. սննդային հավելանյութեր. բուսական հավելանյութեր, հոմեոպաթիկ հավելանյութեր. սննդային հավելանյութեր, մասնավորապես՝ հակաօքսիդիչներ. դեղաբույսերից էքստրակտներ. սնուցող հավելանյութեր. լոսյոնների տեսքով սննդային հավելանյութեր, որոնք վաճառվում են որպես մաշկի խնամքի համար սնուցիչ միջոցների բաղադրամասեր. դեղաբույսեր բուժական, բժշկական նպատակների համար. փոշենման սննդային հավելանյութերով խմելու խառնուրդներ.մշակված բույսեր բժշկական նպատակների համար.

դաս 29. բանջարեղենային էքստրակտներ և պահածոյացված բույսեր խոհանոցի համար. բուսական յուղ և ճարպեր, այդ թվում՝ մարգարին. բուսական էքստրակտներ, բուսական էքստրակտների բաղադրամասեր, կենսաքիմիական պրոցեսով մշակված բուսական էքստրակտներից խառնուրդներ, ցանկացած սննդի մեջ օգտագործելու համար.

դաս 30. բուսական սննդային ըմպելիքներ. բուսական թեյ սննդային նպատակների համար. բանջարեղենային կոնցենտրատներ, որոնք օգտագործվում են որպես համեմունք. հացահատիկի հիմքով սննդային ըմպելիքներ. էքստրակտներ, որոնք օգտագործվում են որպես բուրավետարարներ:

(740) Արարատ Գալոյան


---

(210) 20150020 **(111) 23898**
(220) 20.01.2015 **(151) 11.01.2016**
(181) 20.01.2025

(730) «Ֆեյմըս գրուպ» ՍՊԸ, Երևան, Էստոնական 14, բն. 37, ՀՀ

(442) 05.03.2015

(540)



(526) «PUB» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է բաց գազարագույն, մոխրագույն և շագանակագույն գունային համակցությամբ:

(511)

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում:

---

(210) 20150044 **(111) 23899**
(220) 27.01.2015 **(151) 11.01.2016**
(181) 27.01.2025
(730) Սամսունգ Ք ընդ Թ Քորփորեյշն, KR
(442) 04.09.2015
(540)

SAMSUNG

(511)

դաս 1. քիմիական նյութեր, որոնք նախատեսված են օգտագործելու արդյունաբերական և գիտական նպատակներով՝ լուսանկարչության, գյուղատնտեսության, այգեգործության և անտառաբուծության մեջ. չմշակված սինթետիկ խեժեր, չմշակված պլաստմասսաներ. պարարտանյութեր. կրակմարող բաղադրություններ. քիմիական նյութեր մետաղների զոդման և մխման համար. քիմիական նյութեր սննդամթերքի պահածոյացման համար. դաբաղիչ նյութեր. սոսնձող նյութեր արդյունաբերական նպատակներով օգտագործելու համար. արհեստական աղեր բուսաբուծության համար. խառը պարարտանյութ. տերևներից բուսահող (պարարտանյութ). միզանյութ. լուսազգայուն լուսանկարչական թուղթ. լուսանկարչական երևակիչներ. լուսանկարչական թուղթ. լուսապատճենահանման թուղթ. չլուսակայված լուսազգայուն ժապավեն. հակասառիչ նյութեր. ջրամերժարարներ. փրփրամարիչներ. կատալիզատորներ. չսառչող պատրաստուկներ. ածխաջրածին. հեղուկ օդ. թաղանթանյութ. ցելուլոիդներ. պոլիվինիլքլորիդային խեժեր. պոլիեթերային խեժեր. բորակի թուղթ. ռեակտիվ ինդիկատորային թուղթ. բաղադրություններ տեխնիկական կերամիկայի արտադրության համար. ակրիլանիտրիլի, ստիրոլի, բուտադիենի համապոլիմերներ. չմշակված էպօքսիդային խեժեր. պոլիբուտիլենային խեժեր. պոլիբուտիլենային տերեֆտալատի խեժեր. պոլիվինիլացետատի խեժեր. ֆտորային խեժեր. պոլիստիրոլային խեժեր. պոլիուրեթանային խեժեր.

դաս 2. ներկեր, արծնուկներ, լաքեր. մետաղը ժանգոտումից և փայտանյութը քայքայումից պաշտպանող նյութեր. ներկանյութեր. խածանյութեր, ներկանյութերի սևեռակայիչներ. չմշակված բնական խեժեր. թերթավոր և փոշենման մետաղներ՝ գեղարվեստական, գեղազարդման նպատակների և գեղարվեստական տպագրության համար. կցող պատրաստուկներ ներկերի համար, արծներ (լաքեր), անիլինային ներկանյութեր, ներկանյութեր, մասնավորապես՝ անատո (փայտային ներկանյութերի լուծամզուքներ), թանձր հակակոռոզիական քսուքներ, մանրէասպան ներկեր, բիտումային լաքեր, գազի մուր (ներկանյութ), ներկիչ լուծամզուքներ, մասնավորապես՝ որդան կարմիր, ներկեր խեցեգործական իրերի համար, պատվածքներ (ներկեր) գուդրոնապատված ստվարաթղթի համար, ներկանյութեր ապրանքների արտադրության համար, սոսնձաներկեր, արծնաներկեր, սևեռիչներ, մասնավորապես՝ փայտի կամ մետաղական իրերի վրա օգտագործվող լաքեր, ջնարակներ (պատվածքներ) ներկերի կամ լաքերի համար, ապակու մածիկներ, ներկող նյութեր, մասնավորապես՝ ինդիգո (ներկանյութ), ներկանյութեր կաշվի համար, որպես պատվածքներ օգտագործվող լաքեր, լամպի մուր (ներկանյութ), յուղային մածիկներ, մասնավորապես՝ մածվածքներ լուսամուտի ապակիների և փեղկերի համար, տպագրական ներկեր, ներկանյութեր, որոնք օգտագործվում են ներկելու ընթացքում արագ չորացման և սննդի կամ մանածագործվածքների արտադրանքի համար, մասնավորապես՝ զաֆրան (քրքում). լցանյութեր (լցուկներ) ներկերի համար, նոսրացուցիչներ (ջրիկացուցիչներ) լաքերի համար, նոսրացուցիչներ (ջրիկացուցիչներ) ներկերի համար, տիտանի երկօքսիդ (գունանյութ), պաշտպանական նախաներկային (ներկապաստառային) պատվածքներ տրանսպորտային միջոցների շրջանակների (հենոցների), ամրաշրջանակների համար.

դաս 4. տեխնիկական յուղեր և (թանձր) քսուքներ. քսանյութեր. փոշու կլանման, թրջման և կապակցման բաղադրություններ. վառելիք (ներառյալ շարժիչային բենզինը) և նյութեր լուսավորման նպատակների համար. մոմեր, պատրույգներ լուսավորման համար. էլեկտրաէներգիա. արդյունաբերության մեջ օգտագործվող ջրածնավորված յուղեր.

արդյունաբերության մեջ օգտագործվող փոշենման յուղեր և ճարպեր. քարածուխ. մամլած ածուխ. թեթև յուղեր (նավթամթերք). նավթա. կերոսին (թորած նավթ). լուսավորող յուղեր. դիզելային վառելիք. բենզոլ. էթիլային սպիրտ, մեթիլացված. եթեր նավթային. գազոլին (չզտած բենզին). ոչ քիմիական հավելանյութեր յուղերի և վառելիքի համար. անմշակ նավթ վառելիք. արհեստական վառելիք. ծանր վառելիք. հեղուկ նավթագազ. պնդացված գազեր (վառելիք). նավթագազ. բնական գազ. գազակերպ պրոպան. դյուրավառ փոշիացված խառնուրդներ.

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ սնունդ և նյութեր բուժական կամ անասնաբուժական նպատակների համար, դիետիկ հավելումներ մարդկանց և կենդանիների համար. մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ. կենսաբանական պատրաստուկներ բժշկական (բուժական) նպատակների համար. կենսաբանական դեղամիջոցներ. դեղամիջոցներ մարդու համար. դեղամիջոցներ անասնաբուժական նպատակների համար. դեղագործական պատրաստուկներ. դեղագործական պատրաստուկներ ուռուցքների (նորագոյացության) բուժման համար. դեղագործական պատրաստուկներ ախտորոշման համար. հակաուռուցքային, հակախոցային պատրաստուկներ. նյութափոխանակությունը կարգավորող պատրաստուկներ. դիմադրողականությունը կարգավորող դեղագործական պատրաստուկներ. բջիջների գործունեությունը ակտիվացնող դեղագործական պատրաստուկներ. կենսաբանական հյուսվածքներ բժշկական նպատակների համար. դեղահաբեր այրոցների բուժման համար. դեղագործական պատրաստուկներ պերիֆերիկ նյարդային համակարգի համար. դեղագործական պատրաստուկներ կենտրոնական նյարդային համակարգի համար.

դաս 12. տրանսպորտային միջոցներ. ցամաքով, օդով կամ ջրով տեղաշարժվող ապարատներ. էլեկտրաշարժիչավոր հեծանիվներ. էլեկտրաշարժիչավոր սկուտերներ (տրանսպորտային միջոցներ). երկանիվ շարժիչային տրանսպորտային միջոցներ. էլեկտրաշարժիչավոր ավտոմոբիլներ (ավտոմեքենաներ). էլեկտրական շարժիչներ ավտոմոբիլների (ավտոմեքենաների) համար. էլեկտրական շարժիչներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար.

դաս 17. կաուչուկ, ռետին, գուտապերչ, ասբեստ, փայլար և այդ նյութերից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. մասնակի մշակված պլաստմասսայից իրեր. խծուծման, խցման և մեկուսացման նյութեր. ոչ մետաղյա ճկուն խողովակներ. պլաստմասսայից սպունգներ. պլաստմասսայից ձողեր և ցանցեր. պլաստմասսայից թիթեղներ. պլաստմասսայից տախտակներ և թերթեր. մետաղական մեկուսիչ նրբաթիթեղ. պլաստմասսայից ժապավեններ (բացառությամբ փաթեթավորման համար նախատեսվածների). մասնակի մշակված պլաստմասսայից ժապավեններ. ուրեթանային կաուչուկ. քլորկաուչուկ. սիլիկոնե կաուչուկ. ջերմամեկուսիչ նյութեր. հրակայուն մեկուսիչ նյութեր. էլեկտրամեկուսիչ նյութեր.

դաս 18. կաշի և կաշվի նմանակումներ, դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. կենդանիների մորթիներ. սնդուկներ և ճամփորդական ճամպրուկներ. անձրևակալներ և հովանոցներ. ձեռնափայտեր. մտրակներ, լծասարքեր և թամբագործական իրեր. քսակներ. այցեքարտերի թղթապանակներ. դյուրակիր գեղարարության տուփեր (դատարկ վաճառվող). վզնոցներ կենդանիների համար, հագուստ կենդանիների համար. կահույքի կաշվե հարդարանք. կաշվե պաստառներ. բանալիների կաշվե պատյաններ. կաշվե փականներ (կափույրներ). սարքավորանք ձիավարության համար.

դաս 20. կահույք, հայելիներ, նկարների շրջանակներ. փայտից, խցանից, եղեգից, ուռենուց, եղջյուրից, ոսկրից, փղոսկրից, կետի բեղից, կրիայի զրահից, խեցուց, սաթից, սադափից, ծովի փրփուրից, այդ նյութերի

փոխարինիչներից կամ պլաստմասսայից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում.

դաս 22. ճոպաններ, պարաններ, առասաններ, ցանցեր, վրաններ, ծածկարաններ, բրեզենտ, առագաստներ, պարկեր և տոպրակներ (որոնք ընդգրկված չեն այլ դասերում). խծուծման նյութեր (բացառությամբ ռետինից և պլաստմասսայից պատրաստվածների). մանածագործական թելքահումք.

դաս 23. մանվածք և թելեր մանածագործության համար.

դաս 24. գործվածքներ և մանածագործական ապրանքներ, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. անկողնու ծածկոցներ. սեղանի ծածկոցներ.

դաս 25. հագուստ, կոշկեղեն, գլխարկներ. կիսագուլպաներ. փողկապներ. գլխարկներ (գլխի ծածկոցներ). գոտի-քսակներ (դրամապանակներ). սպորտային հագուստ. վերնազգեստ. հագնելու սպիտակեղեն. սվիտերներ. շապիկներ (բլուզներ). գուլպաներ. շարֆեր (հագուստ). ձմեռային ձեռնոցներ. ականջակալներ (հագուստ). անջրանցիկ անձրևանոցներ. գոտիներ (հագուստ). մետաղե եզրակ կոշիկների համար.

դաս 27. լինոլեումի պաստառներ. մասնակի մշակված վինիլային պաստառներ.

դաս 28. խաղեր և խաղալիքներ. մարմնամարզական և սպորտային իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տոնածառի զարդեր. խաղեր. տիկնիկներ. խաղալիքներ. խաղալիքներ ընտանի կենդանիների համար. ապարատներ և սարքեր զվարճությունների և ատրակցիոնների այգիների համար. տոնավաճառների զվարճահարմարանքներ. սպորտային պարագաներ (բացառությամբ գոլֆի, լեռնագնացության պարագաների. հենակ (լեռնագնացության սարքավորանք). սարքեր (պիտույքներ) լեռնագնացության համար. գոլֆի մականների համար անվավոր կամ առանց անիվների պայուսակներ. գոլֆի գնդակներ. գոլֆի մականներ. ձկնորսական պարագաներ (պիտույքներ).

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ. սպորտի կառավարում, մանրածախ վաճառքի ծառայություններ, որոնք ներառում են համակարգչային ծրագրեր համացանցի, այլ համակարգիչների և էլեկտրոնային կապի ցանցերի միջոցով. մանրածախ վաճառքի ծառայություններ, որոնք ներառում են դյուրակիր, բջջային (շարժական), թվային, էլեկտրոնային սարքերի և այլ կենցաղային էլեկտրոնիկայի համակարգչային ծրագրեր. մանրածախ վաճառքի ծառայություններ, որոնք ներառում են տարածքներ, որտեղ օգտատերերը կարող են փորձել և փորձարկել բջջային (շարժական) հեռախոսներ, սմարթֆոններ, պլանշետային համակարգիչներ, շարժական համացանցային սարքեր, ականջակալներ, տեսախցիկներ, համակարգիչներ, էլեկտրոնային կենցաղային սարքեր, հեռուստատեսային ընդունիչներ, համակարգչային մոնիտորներ, տնային կինոթատրոններ, DVD նվագարկիչներ, օպտիկական դիսկերի նվագարկիչ սարքեր, ակնոցներ, 3D ակնոցներ, USB քարտեր, մոդեմներ, էլեկտրական բջջային (շարժական) հեռախոսների կուտակիչներ, թվային հեռուստատեսային կցուրդներ, համակարգիչների կոշտ սկավառակներ, համակարգիչների օպտիկական սկավառակներ, դյուրակիր համակարգիչներ, համակարգիչների տպիչներ, գրպանի անձնական թվային համակարգիչներ, ֆաքսիմիլային ապարատներ, դրամարկղային մեքենաներ, պարտադիր օգտագործմամբ զվարճասարքեր, որոնք հարմարեցված են հեռուստաընդունիչների, տեսահեռախոսների, մագնիսական ժապավենների վրա գրանցման (ձայնի, պատկերի, տեղեկատվության) սարքերի, MP3 նվագարկիչների, դյուրակիր մուլտիմեդիային նվագարկիչների, համակարգիչների ձայնի գրառման և վերարտադրման սարքերի, կոմպակտ սկավառակների նվագարկիչների, կինոպրոյեկտորների, տեսագրման սարքերի և տեսասկավառակների հետ օգտագործելու համար. մանրածախ վաճառքի ծառայություններ, որոնք ներառում են վերոնշյալ ապրանքները.

դաս 36. ապահովագրություն. ֆինանսական գործունեություն. դրամավարկային գործառնություններ. անշարժ գույքի հետ

կապված գործառնություններ. շինությունների վաճառք. անշարժ գույքի հետ կապված գործառնություններ իրականացնող գործակալություններ. հանրախանութների ֆինանսական կառավարում. անշարժ գույքի գնահատում. անշարժ գույքի կառավարում. անշարժ գույքի հանձնում վարձակալության. միջնորդություն անշարժ գույքի հետ կապված գործառնություններում. ոչ բնակելի տարածքների հանձնում վարձակալության. սուպերմարկետների ֆինանսական կառավարում. խանութների ֆինանսական կառավարում. բնակելի ֆոնդի կառավարում. բնակարանների հանձնում վարձակալության. բնակելի տարածքների կառավարում. միջնորդություն տների հետ կապված գործառնություններում. միջնորդություն անշարժ գույքի հետ կապված գործառնություններում. միջնորդություն բնակարանների հետ կապված գործառնություններում. բարեգործական միջոցների հավաքագրում, մասնավորապես՝ երեխաներին ֆինանսական աջակցության և երիտասարդների հասարակական աջակցության ծրագրերի ապահովում. ապահովագրություն. երաշխավորություն. ապահովագրման գրասենյակներ. միջնորդություն ապահովագրման դեպքում. ապահովագրություն արտադրության մեջ. կյանքի ապահովագրություն. վերաապահովագրություն. սպառողների կրեդիտների ապահովագրություն. երաշխավորողների ապահովագրություն. պատահարներից ապահովագրություն. կորած իրերի ապահովագրություն. բժշկական ապահովագրություն. պարտավորությունների ապահովագրություն. հրդեհներից ապահովագրություն. գողություններից ապահովագրություն. պարտադիր սոցիալական ապահովագրություն. թոշակների ապահովագրություն. ավտոմեքենաների ապահովագրություն. ինքնաթիռների ապահովագրություն.

դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ). ապրանքների փաթեթավորում և պահպանում. ճանապարհորդությունների կազմակերպում.

դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում. զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում. հյուրերի զբաղեցման (զվարճացման) կազմակերպում, մասնավորապես՝ տեղային կամ գլոբալ կապի ցանցերից տրամադրվող առցանց համակարգչային խաղերի ապահովում, ներառյալ՝ համացանց, ներքին ցանց, արտաքին ցանց, հեռուստատեսություն, բջջային (շարժական) կապ, բջջային և արբանյակային ցանցեր. ձայնագրությունների պահեստարանների ծառայություններ. առցանց էլեկտրոնային հրապարակումներ, մասնավորապես՝ գրքերի և երաժշտության հրապարակումներ. առցանց ամսագրեր, մասնավորապես՝ բլոգերների ընդհանուր հետաքրքրությունների մասին բլոգներ. լուսանկարչություն. գլոբալ համակարգչային ցանցի միջոցով վեբ-կայքերի տրամադրում, որը թույլ է տալիս օգտատերերին ծրագրավորելու ձայնա-, տեսա-, տեքստային և այլ մուլտիմեդիային բովանդակություններ, ներառյալ՝ երաժշտություն, համերգներ, տեսագրություններ, ռադիո, հեռուստատեսություն, նորություններ, սպորտ, խաղեր, մշակութային միջոցառումներ և զվարճանքի ծրագրեր. տեղային կամ գլոբալ կապի ցանցի միջոցով առցանց տրամադրվող երաժշտության, զվարճության, կրթության, ինտերակտիվ զվարճության և կրթության մասին տեղեկատվության ապահովում, ներառյալ՝ համացանց, ներքին ցանց, արտաքին ցանց, հեռուստատեսություն, բջջային (շարժական) կապ, բջջային և արբանյակային ցանցեր. թվային տեսա-, ձայնա- և մուլտիմեդիային զվարճությունների հրապարակման ծառայությունների տրամադրում. թվային տեսա-, ձայնա- և մուլտիմեդիային զվարճությունների ծառայությունների տրամադրում. երեխաների համար կրթական ծրագրերի և երիտասարդների հասարակական աջակցության ծրագրերի անցկացում. զվարճանքի (ատրակցիոն խաղերի) զբոսայգիներ.

(740) Արարատ Գալոյան

---

(210) 20150095 **(111) 23900**
(220) 02.02.2015 **(151) 11.01.2016**
(181) 02.02.2025

(730) Обществo с Ограниченной Ответственностью “Евротех”, RU

(442) 05.03.2015
(540)

BELUX

(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ.

դաս 16. թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կպչուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ:

(740) Զարուհի Մանուկյան

---

(210) 20150266 **(111) 23901**
(220) 04.03.2015 **(151) 11.01.2016**
(181) 04.03.2025

(730) Անհատ ձեռնարկատեր Գայանե Եղիազարյան, Երևան, Աերացիա 2, ԱՄ

(442) 19.03.2015
(540)

LONDON EYE

(526) «LONDON» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև, կանաչ, բաց և մուգ կանաչ գունային համակցությամբ:

(511)

դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում:

---

(210) 20150271 **(111) 23902**
(220) 04.03.2015 **(151) 11.01.2016**
(181) 04.03.2025

(730) «Համ» ՍՊԸ, Լոռու մարզ, գ. Օձուն, 1-ին փ., տուն 66/1, ԱՄ

(442) 20.04.2015
(540)

ArmenianTea

(591) Ապրանքային նշանը պահպանվում է կարմիր և սև գունային համակցությամբ:

(511)

դաս 5. դիետիկ սնունդ, այդ թվում՝ դիետիկ ըմպելիքներ, մանկական սնունդ, սննդային հավելումներ, այդ թվում՝ բուսական թեյեր, բուսական թեյեր բժշկական և առողջարար նպատակների համար, բուժական կոնֆետներ, օշարակներ դիետիկ և բուժական նպատակների համար.

դաս 29. պահածոյացված, սառեցված, չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր և բանջարեղեն, դոնդող, մուրաբա, կոմպոտ, այդ թվում՝ ջերմամշակած մրգերի աղանդերներ, բանջարեղենի պահածոներ, մրգեր օշարակի մեջ, պտուղ, հատապտուղ, բանջարեղեն՝ շաքարի օշարակով պատրաստված, չորացրած մրգեր և բանջարեղեն, բուսական խտանյութեր, էքստրակտներ.

դաս 30. սուրճ, թեյ, բուսական թեյ, մրգաթեյ, ծաղկաթեյ, բանջարեղենային թեյեր, արմատային թեյեր ոչ բժշկական

